

Յուղարեր ՅԱՓՈՒՆՉՅԱՆ Գայանե ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

ԱՆՑՈՒՍԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Բորսայական ինդեքսները բորսայական առևտուրը բնութագրող հիմնական ցուցանիշներն են: Այդ ինդեքսները բնութագրում են ոչ միայն արժեքրերի շուկայի իրավիճակը, այլև տնտեսության զարգացման դիմամիկան: Զարգացած երկրներում այդ ինդեքսները հանդիսանում են նակրոտնեսական կարևորագույն ցուցանիշ: Զարգացող և, հատկապես, անցումային տնտեսություններում ինդեքսների կառուցման հետ կապված դժվարությունները բացատրվում են շուկաների ցածր իրացվելիությամբ, եթե որոշ բաժնետոմսերի գնաճումները կարող են երկար ժամանակ գոյություն չունենալ: Այս հիմնախնդիրն այսօր ցայտուն է արտահայտված Հայաստանում: Անցումային տնտեսություններում չափազանց կարևոր են արժեքրերի շուկաների ինդեքսների կառուցման սկզբունքները: Եթե զարգացած շուկաների համար տարրեր սկզբունքներով կառուցված ինդեքսները նոյն ընտրանքի դեպքում հիմնականում տալիս են շատ մոտ արդյունքներ, ապա անցումային տնտեսություններում, որոնց արժեքրերի շուկաները, ինչպես արդեն նշվել է, բնութագրվում են ցածր իրացվելիությամբ, ստացված արդյունքները կարող են իրարից խիստ տարրերվել: Այսպիսի իրավիճակում չափազանց կարևոր է ինդեքսը այնպես կառուցել, որ:

1. Ինդեքսը հաշվարկելիս օգտագործվեն շուկայում իրականացվող փոքրաբիլ գործարքների հնարավորին չափ շատ տվյալներ: Հասկանալի է, որ այս նպատակին կարելի է հասնել ընտրանքը մեծացնելու հաշվին: Սակայն ընտրանքը չափազանց մեծացնելիս առաջ է զալիս մեկ այլ գտանք՝ այնպիսի բաժնետոմսերով գործարքները, որոնք շուկայի վրա որևից իրական ազդեցություն չունեն:

2. Հնարավոր է, որ այսպիսի շուկաներում իմաստ ունի կառուցել այնպիսի ինդեքսներ, որոնք բնութագրում են ոչ միայն գնային տատանումները, այլև շուկայի ակտիվույթն մակարդակը:

Անցումային տնտեսություն ունեցող երկրներում ինդեքսները կառուցելիս որոշ չափով կարող են փոփոխվել կառուցման վերը թվարկած սկզբունքները: Առաջին սկզբունքը չափողականությունն է: Ծատ կարևոր է, որ ընտրանքի չափողականությունը համապատասխանի տվյալ ինդեքսով նկարագրվող բորսայական սեկտորը կազմող ընկերությունների քանակին, կամ որևից չափանիշով ընտրված տվյալ սեկտորի առավել կարևոր ընկերությունների քանակին: Թերի զարգացած արժեքրերի շուկաներ ունեցող անցումային տնտեսություններում իմաստ ունի կիրառել փոփոխական ընտրանքի չափողականություն ունեցող ինդեքսներ: Այս մոտեցումը թույլ է տալիս արձագանքել այսպիսի շուկաների կառուցվածքի և առաջատարների արագ փոփոխության գործընթացներին: Նշենք նաև, որ թերի զարգացած շուկաներում օգտագործվում են նաև չափազանց փոքր ընտրանքով ինդեքսներ, որոնք թույլ են տալիս գործ ունենալ միայն այն բաժնետոմսերի հետ, որոնք խիստ համապատասխանում են ընտրված չափանիշներին: Միևնույն ժամանակ, փոքր ընտրանքի դեպքում կարող է կորչել ներկայացուցչականության պատշաճ մակարդակը:

Հաջորդ սկզբունքը ներկայացուցչականությունն է, այսինքն՝ ինդեքսի մեջ մտնող բաժնետոմսները ինչպես են արտահայտում տվյալ ճյուղի վիճակը: Ինդեքսի հաշվարկման ընտրանքը կազմող բաժնետոմսների ընտրությունը իրականացվում է որոշակի սկզբունքների հիման վրա: Զարգացած երկրներում այդպիսի սկզբունքներից հիմնականում հանդիսանում է զալիս որևից բորսայում լիստինգ անցնելը և, ավելի հազվադեպ, բորսայական կապիտալիզացիայի որոշակի մակարդակը: Ծյուղային ինդեքսների համար որպես այդպիսի ցուցանիշ, բնականարար, հանդիսանում է զալիս նաև տնտեսության համապատասխան ճյուղին պատկանելը: Զարգացող և անցումային երկրներում, բացի վերը նշված գործուներից, որպես չափանիշ համախ օգտագործվում են նաև հետևյալ ցուցանիշները:

- տվյալ բաժնետոմսի գնանշումներն ունեն սահմանված ժամանակահատվածով պատմություն,
- տվյալ բաժնետոմսն ունի սահմանված հաճախականությամբ գնանշումներ,
- տվյալ բաժնետոմսն ունի սահմանված ժամանակահատվածով դիվլիդենտային պատմություն,
- տվյալ բաժնետոմսն ունի սահմանված ժամանակահատվածով անընդմեջ գնանշումներ:

Հասկանալի է, որ այս կամ այն չափանիշը և այս կամ այն սահմանված ժամանակահատվածն ընտրելիս անհրաժեշտ է նախ ուսումնասիրել հետազոտվող շուկան, ճիշտ ընտրելու համար առավել օպտիմալ ժամանակահատվածները և չափանիշները։ Այստեղ նոյնպես, հաշվի առնելով թերի զարգացած արժեքորերի շուկաների առանձնահատկությունները, չափանիշները և հատկապես ժամանակահատվածները կարող են փոփոխական լինել։

Հայաստանի Ֆոնդային բորսան և ծրագրավորում է մոտակա ժամանակաշրջանում ներմուծել ֆոնդային ինդեքս, որի կառուցման մեխանիզմի ընտրության համար կատարվել են նի շարք հետազոտություններ։

Հայաստանի Ֆոնդային բորսայի ինդեքսի հաշվարկման ամենաարդյունավետ մեխանիզմը կարող է լինել համաշխարհային պրակտիկայում առավել օգտագործվող, իսկ անցումային տնտեսություններում հատկապես օգտագործվող կապիտալիզացիայով կշռված ինդեքսները։ Ինդեքսների հաշվարկման այլ մեխանիզմներն ունեն որոշակի թերթություններ, որոնք Հայաստանի կապիտալի շուկաների թերի զարգացվածության պայմաններում կարող են թերել անհաղթահարելի բարդությունների։ Ինչպես արդեն նշվել է, ցածր իրացվելիություն ունեցող շուկաների համար շատ կարևոր է ընտրել ինդեքսների կառուցման ձևուն մեխանիզմ այնպես, որ այն բույլ տա հաշվի առնել շուկայում իրականացվող փորբարիվ գործարքների մեծ մասը՝ միաժամանակ հնարավորություն ստեղծի խուսափել ոչ էական գործարքների հաշվարկումից։ Բացի այդ, մեխանիզմը պետք է հնարավորություն ստեղծի փոփոխական շափողականությամբ և ներկայացուցչականությամբ ինդեքսների կառուցման համար։ Կարևոր է նաև ինդեքսը կառուցելիս հնարավորություն ունենալ հաշվի առնելու այս կամ այն բաժնետոմսներով իրականացվող գործարքների ակտիվությունը կամ հաճախականությունը։ Ենթերվ վերը նշված իմնադրությունը՝ կառուցվել են տարբեր ինդեքսները ինդեքսները կառուցված են Հայաստանի ֆոնդային բորսայում լիստինց անցած բաժնետոմսներով իրականացված գործարքների հիմնա վրա։ Որպես տվյալների բազա ընտրված են ՀՖ-ում իրականացված գործարքները՝ սկզբած առաջին առևտրային նատաշրջանից՝ 2001թ. հուլիսի 6-ից մինչև 2002թ. նոյեմբերի 14-ը։ Ընդ որում, ինդեքսների կառուցումը սկսված է ոչ շուտ, քան 2002թ. հունվարի 1-ից, երբ բավականաչափ ընկերություններ էին ցուցակվել, և բորսայում իրականացվել էին որոշակի քանակությամբ գործարքներ։ Հետազոտությունները իրականացվել են հատուկ այս նպատակի համար Visual Basic համակարգային ծրագրավորման լեզվով և MS SQL տվյալների բազաների կառավարման համակարգով։ Ազգրիքնը հիմնված է կապիտալիզացիոն ինդեքսների հաշվարկման բանաձևերի վրա։ Ծրագիրը բույլ է տալիս փոփոխել հետևյալ մեծությունները։

1. Ինդեքսի չափողականությունը։ Մասնավորապես, ավտոմատիկորեն հաշվի են առնվում լիստինցի և դելիստինցի գործընթացները, այն դեպքերում, երբ ինդեքսի կառուցման համար օգտագործվում են բոլոր լիստինց անցած բաժնետոմսները։

2. Ինդեքսի ներկայացուցչականությունը։ Այսպես, հնարավորություն կա ընտրել ցանկացած ժամանակահատվածի համար ցանկացած քանակությամբ լավագույն բաժնետոմսները։ Այս հաճախանքը շատ կարևոր է, երբ ինդեքսը կառուցվում է որոշակի սկզբունքով ընտրված լավագույն ո քանակությամբ բաժնետոմսների հիմնա վրա։ Ծրագիրը բույլ է տալիս փոփոխել ինչպես ո արժեքը, այնպես էլ ընտրել համապատասխան ցանկությամբ լավագույն բաժնետոմսները։ Կարող է կիրառվել լավագույն բաժնետոմսեր ընտրելու երկու տարրերակ.

- առավել ակտիվ առք ո վաճառքի առարկա հանդիսացող բաժնետոմսները (որոշվում է նախորդ առևտրային նատաշրջանների ընթացքում իրականացված գործարքների քանակով),

- առավելագույն կապիտալիզացիա ունեցող բաժնետոմսները:

Այդ հետազոտությունում որպես լավագույն բաժնետոմսների շահանիշ վերցրել են առավել ակտիվ առ ու վաճառքի առարկա հանդիսացող բաժնետոմսները: Երբ այս շահանիշով բաժնետոմսները հավասար են, ապա որպես լավագույն հանդես է զայխ ավելի մեծ կապիտալիզացիա ունեցող բաժնետոմսը: Կապիտալիզացիայի գործակիցը որպես իիմնական շահանիշ չեն վերցրել, քանի որ ցածր իրացվելիության պայմաններում լավագույն կապիտալիզացիա ունեցող բաժնետոմսները կարող են երկար ժամանակահատվածի ընթացքում (ամիսներ) չհանդիսանալ գործարքի առարկա և հետևաբար չպարունակել որևէ օգտակար տեղեկություն ինդեքսի կառուցման համար:

3. Գործարքների առարկա չինելու ժամանակահատվածը. Ծրագիրը հնարավորություն է տալիս սահմանել ժամանակահատված, որի ընթացքում բաժնետոմսը գործարքի առարկա չհանդիսանելու դեպքում ավտոմատիկորեն դուրս է զայխ ընտրանքից, իսկ եթե տեղը գրավում է ըստ ընտրված շահանիշի հաջորդ լավագույն բաժնետոմսը: Այս ժամանակահատվածը նույնականացնելու համար է փոխել:

4. Բազիսային օրը: Ծրագիրը թույլ է տալիս ինդեքսի հաշվարկը սկսել ցանկացած բազիսային օրվանից: Մասնավորապես, այսուղեւ հաշվարկվել են ինդեքսներ երեք տարբեր բազիսային օրերի համար: Այդ բազիսային օրերն են՝ 2001թ. հունվարի 3-ը, 2001թ. փետրվարի 1-ը և 2001թ. մայիսի 1-ը: Հասկանալի է, որ բազիսային օրը մի անգամ ընտրելուց հետո չի կարելի համախ փոխել: Այդ հետազոտությունների նպատակը բազմաթիվ կորեր ստանալուց հետո էնակիրկի ճանապարհով լավագույն պարամետրեր ունեցող կորի ընտրությունն է: Բոլոր կորերի համար որպես բազիսային օրվա արժեք է ընտրվել 1000-ը: Այսպիսով, վերը թվարկված սկզբունքներով կառուցվել են 42 կորեր: Եվ տարբեր սկզբունքներով կառուցած կորերը նոյն տվյալների բազաների համար տախուն են իրարից բավականին տարբերվող արդյունքներ: Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում ստացված կորերից գտնել լավագույնը:

Սուբյեկտիվ գնահատականներից խոսափելու համար որպես լավագույնի շահանիշ ընտրվել են հետևյալ երկուար՝

1. Ստացված կորերի վարիացիայի գործակիցը, որը հաշվարկվում է որպես ստացված արժեքների միջինի և վարիացիայի բաժանորդ:

2. Փոխադարձ կորելյացիայի գործակիցների միջինը: Այս ցուցանիշը հաշվարկելու համար կազմված է կորերի փոխադարձ կորելյացիաների գործակիցների աղյուսակ: Ամեն կորի համար հաշվարկված է մյուս 41 կորերի կորելյացիայի գործակիցների գումարը և բաժանված է 41-ի: Բացասական կամ փոքր փոխադարձ կորելյացիայի միջին գործակից ունեցող կորերը դուրս կմնան լավագույն կոր հանդիսանալու դիտարկումից, քանի որ նրանցով ստացված արդյունքներն առավել շատ են տարբերվում բոլոր կորերով նկարագրվող ընդհանուր միտումներից: Մնացած կորերից լավագույնը ընտրվում է փոքր վարիացիայի գործակից ունենալու սկզբունքով, քանի որ բարձր վարիացիայի գործակիցը նշանակում է ինդեքսի ավելի մեծ տատանումներ, որոնք շատ դեպքերում կապված կլինին ոչ բն շուկայում իրականացր պրոցեսների, այլ պարզապես ինդեքսի կառուցման պարամետրերի ոչ օպտիմալ լինելու հետ:

Սիևույն ժամանակ շատեր է մոռանալ՝ որքան մեծ է դիտարկման ժամկետը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ վարիացիայի գործակիցը կարող է մեծ լինել: Այդ պատճառով, երկրորդ շահանիշը օգտագործելիս, պետք է համեմատել միևնույն բազիսային ժամանակահատված ունեցող կորերը:

Այս հետազոտությունների արդյունքներից ենելով Հայաստանի ֆոնդային բրուսան մշակել է ինդեքսի հաշվարկման նախագիծ, որի էռորյունը հետևյալն է: Նախ ինդեքսը կոչվում է ARDEX: Այս ինդեքսի հաշվարկման բազայի մեջ են մտնում այն ընկերությունները բաժնետոմսները, որոնք ցուցակված են ՀՖ-ում: Ինդեքսի հաշվարկման բազան կազմված է երկու մասից. իիմնական (իր մեջ ընդգրկում է 10 արժեքուր) և լրացուցիչ (իր մեջ ընդգրկում է 5 արժեքուր): Լրացուցիչը նախատեսված է ինդեքսի հաշվարկման իիմնական բազայում փոփոխություն կատարելու նպատակով: ARDEX ինդեքսի բազայի մեջ մտնող արժեքուրների ընտրությունը կատարվում է համաձայն վերը նշված 2 գործունների (տվյալ ընկերության կապիտալիզացիայի և շրջանառության ծավալի): ARDEX-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ARMEX=Market Capitalization/Latest Index Divisor

$$\text{Market Capitalization} = \sum_{i=1}^n P_{i,t} * Q_{i,(t-1)} * R_i \text{ որտեղ}$$

$P_{i,t}$ -i-րդ արժեքորդի գիմն է ժամանակի տպահին,

$Q_{i,(t-1)}$ - i-րդ արժեքորդի քանակությունն է շրջանառության մեջ ժամանակի տպահին,

R_i - i-րդ արժեքորդի ներկայացուցչականության գործակիցն է:

Ներկայացուցչականության գործակիցի նպատակն է՝ նվազեցնել ինդեքսում այն արժեքորդերի կշիռը, որոնց կապիտալիզացիան գերազանցում է ինդեքսի հաշվարկման բազայում ընդգրկված արժեքորդերի ընդհանուր կապիտալիզացիայի 30%-ը:

Latest Index Divisor-ը ճշտման գործակից է՝ կորպորատիվ իրադարձությունները հաշվի առնելու համար:

ПРИНЦИПЫ ИНДЕКСИРОВАНИЯ В ПЕРЕХОДНЫХ ЭКОНОМИКАХРезюмеЮ. Япунджян, Г. Салназарян

Для общей характеристики конъюнктуры рынка ценных бумаг, оценки его состояния используются некоторые синтетические показатели, при составлении которых необходимы сведения относительно объема и цены сделок. Обрабатывая имеющиеся под рукой сведения, фондовые биржи получают показатели, которые называются индексами. Индексы включают цены всех сделок вместе с их объемами. В статье представлены принципы построения биржевых индексов в странах с экономикой переходного периода. В частности представлен индекс ARMEX, разработанный армянской фондовой биржей. Исходя из индексов, характеризующих биржевую торговлю, можно получить представление не только о состоянии рынка ценных бумаг, но и о динамике экономического развития.